



Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Маскъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացը կիրակի եւ առիւթները):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ՀԵՐԻՔՆԱԶ ՍԱՐԻՔԵԵԱՆ ՄԱՏԻՆԵԱՆԻ

Մահը, որը անդի ունեցող զինվորների 3-ին, ժամ 1-ին կէսօրից լետուր Արեւիքը կը
կատարվի չորեքշաբթի, ժամի 6-ին երեկոյեան, Մատինեանի բնակարանում—Գուգուքիչա
փողոց, տուն Փիթոնովի: Յուզարկաւորութիւնը—զինվորների 6-ին, առաւօտեան 10
ժամին, զէպի Մոզնիս օ. Գեորգ եկեղեցին եւ այնտեղից Խօշիվանքի գերեզմանատունը:

1—1

ԲՈՒԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ռուս-պարսկական առևտրական դաշնագիր.
—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Փոքրիկ
նկատողութիւններ. Վրաց թատրոն. Նամակ
Բազուրից. Նամակ Խմբագրութեան. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՐԻՔՆԱԶ
ՑԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՌՈՒՍ-ՊԱՐՏԿԱՎԱՆ ԱՌԵԻՏՐԱՆԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

Ռուսաց քաղաքական շրջաններում եւ
առասաց մամուլի մէջ վաղուց արծարծվում
է նոր ռուս-պարսկական առևտրական դաշ-
նագիր կնքելու լուրջ հարցը: Զոր նայելով
որ վերջին տասնամեակում ռուսաց քաղա-
քական եւ բարոյական ազդեցութիւնը
Պարսկաստանում արագաբեկ է հանդի-
սանում, չը նայելով որ Թէհրանում եւ
վերջերս Թավրիզում բացվել են ռուսաց
պետական բանկի ճիւղեր, չո նայելով
որ այժմ Կասպից ծովից սկսած մինչեւ
Թէհրան շինված է յարմար խճուղի
եւ հնարաւորութիւն կայ ռուսական ապ-
րանքները հեշտութեամբ փոխադրել, չը
նայելով որ Սպահանում եւ Բուշիրում
հաստատվել են ռուսական նոր հիւպատո-
սութիւններ, այնուամենայնիւ խիստ աչքի
է ընկնում մի հանգամանք, այն է, որ
Պարսկաստանում ապրող ռուս հպատակ-
ները արեւաւոր շահերը, Թէհրանական եւ
Թէհրանական, ցանկացածի համեմատ
այնքան էլ լաւ կերպով չեն պաշտպանված
եւ շատ թոյլ բաւարարութիւն են գրա-
նում: Այդ տարօրինակ երեւոյթի պատճառն
էն է, որ Պարսկաստանը չունի որոշ
հաստատու քաղաքացիական օրէնքներ, չունի
կաշառակցութեամբ զատարարներ, որոնց կա-
րողնային դիմել ռուսահպատակները ի-
րանյ օրինաւոր շահերի եւ պահանջների
պաշտպանութեան համար:

Գործող օրէնքներն ամբողջ Պարսկա-
ստանում երկու տեսակ են—շարիաթն եւ
ուրֆը: Շարիաթը կուսական օրէնադրու-
թիւնն է, որով լուծվում են Պարսկա-
ստանում շուրջ ամուսնական, կալուածա-
կան, քաղաքացիական վեճերը, համաձայն
Ղուրանի եւ Իսլամի չարագրութեան, եւ
այդ զէպընում նա արդարադատութեան ու
անաշխատութեան ոչ մի գրաւական չէ ներ-
կայացնում ոչ-իսլամներին համար, հետեա-
րաւ եւ ոչ միայն ռուսաց, այլ եւ եւրոպա-
կան բոլոր քրիստոնեայ կառավարութիւն-
ները մինչեւ այսօր մերժում են թոյլ տալ
ենթարկել չէրի հատարանների իրաւա-
սութեան իրանց հպատակների դատը, վե-
ճերը եւ իրաւունքների պաշտպանութիւնը:
Ուրֆը կամ աղաւթ սովորական կամ
աւանդութիւնների վրա հիմնված բանա-
ւոր օրէնքն է, որը, հէնց բանաւոր լինե-
լու պատճառով, խիստ փոփոխական, ան-
կայուն է եւ նոյնպէս ոչ մի երաշխաւորու-
թիւն չէ ներկայացնում վեճերի արդարա-
ցի լուծման համար: Այդ օրէնքն եւս
մերժվում է եւրոպական կառավարու-
թիւնների կողմից: Միւս օրէնքը, կամ

աւելի ճիշդ ասած, հրահանգները, որոնց
կանոնաւորվում, դատվում եւ վճարվում են
օտար հպատակների վեճերը, դատերը
Պարսկաստանում, 1828-ին կնքված Թիւրք-
մէն-Չալի դաշնագրին է, եւ այդ դաշնագրով
զինվարվում են ոչ միայն ռուսաց, այլ եւ
եւրոպական միւս պետութիւնների դե-
պատակները իրանց հպատակները շահերի
պաշտպանութեան գործում:

Սակայն, եթէ ի նկատի ունենանք, որ
Թիւրքմէն-Չալի դաշնագիրը կնքված է մի
այնպիսի ժամանակ, երբ Ռուսաստանը դեռ
ոչ միայն շատ թոյլ քաղաքական յարաբե-
րութիւն ունէր Պարսկաստանի հետ, իսկ
տնտեսական եւ առևտրական յարաբե-
րութիւնները բոլորովին բացակայում էին, եթէ
ի նկատի ունենանք, որ նա լի քաղաքա-
կան մի ակտ է, որով երկու կուսող եւ ապա
հաշտութիւն կայացնող տէրութիւնները
որոշել են իրանց ապագայ քաղաքական
յարաբերութիւնները, մենք կը տեսնենք,
որ այդ դաշնագրին այժմ, երբ արդէն
անցել է 70 տարի, երբ տնտեսական, ա-
ռևտրական, նոյն իսկ մշտագրային կապեր
երկու դրացի երկրների մէջ ահագին ծա-
ւայ են ստացել, միանգամայն անկարող
է միջազգային օրէնքի եւ առևտրական դաշ-
նագրի տեղը փոխարինել:

Այդ է պատճառը, որ ռուսաց հպատակ-
ները Պարսկաստանում ունեցած վեճերն եւ
նրանց օրինաւոր շահերի պաշտպանու-
թիւնը, չունենալով հաստատուն նեցուկ,
ենթարկվում են անասելի ձգձգումների եւ
ամբողջ տասնեակ տարիներով լուծումն
չեն գտնում: Այդ է պատճառը, որ ոչ մի
նշանաւոր ռուսական առևտրական հաս-
տատութիւն չէ փտահանում որ եւ լուրջ
առևտրական, արդիւնաբերական, գործա-
րանական կամ տնտեսական ձեւաւորու-
թիւն սկսել Պարսկաստանում:

Այդ հանգամանքներն էլ դրուել են ռու-
սաց կառավարական շրջաններին առաջ
բերել Պարսկաստանի հետ նոր առևտրական
դաշնագիր մշակելու եւ կնքելու հարցը,
համաձայն Ռուսաստանի ունեցած այժ-
մեան պահանջներին եւ ձեռք բերած ազ-
դեցութեան:

Եւ որովհետեւ Պարսկաստանի հետ գըլ-
խաւոր առևտրական յարաբերութիւններ
ունեցողներն Անդրկովկասի բնակիչներն են,
իսկ դրացիները, հետեաւորաւ, այդ դաշնա-
գրից Ռուսաստանի հետ միասին կօգտվի
մեր երկիրը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Պատահաւք «Բազմավէպի» խմբագրութեան
ձեռնարկած մի նոր պարբերական պատկերա-
գիր հրատարակութիւնը, որ կրում է «Ե-
ղունի» անունը, նա պիտի հրատարակվի եր-
կու ամիսը մի անգամ, տարին վեց համար
բաժանորդագիրը շատ մատչելի է—1 ֆրանկ
(40 կոպէկ) «Բազմավէպի» բաժանորդների հա-
մար եւ 3 ֆրանկ (1 ռ. 20 կոպէկ) ոչ-բաժա-
նորդների համար: Այդքան չնչին գին ունեցող
պատկերազարդ հրատարակութեան առաջին

համարը բաղկացած է, բացի շապիկից, 8 մե-
ծադիր երեսներից, որոնց վրա 12 հատ զա-
նազան պատկերներ կան: Թուղթը, տպագրու-
թիւնը, ինչ ասել կուզէ, գեղեցիկ են: Դա մի
իսկական «Եղունորստի» է, ի հարկէ զեռ
փոքրիկ չափերով: Առաջին պատկերը ներկա-
յացնում է ձիուքի իտալացի տիեզերահնչակ
երաժշտաց—Բելլինի, Դոնիցետտի, Վերդի,
Ռոսսինի: Հետեւեալ չորս պատկերները իտա-
լացի պատկերահանների նկարների պատճէ-
ններն են: Ապա գալիս է հայկական բաժինը:
Այստեղ ըստու՜մ ենք թիւրքահայ հանգուցաւ
մի քանի նշանաւոր գործիչների պատկերները—
Պօղոս Օտեան, Սրբուհի մայրապետ Գալ-
ֆայան, Տիգրան փաշա Փշեւորտեան եւ
Թաւրիզի չորս տեսարաններ: Հայ մանկա-
պարտէզի աշակերտաց խումբը, «Բերդաթա-
ղի անտառներ», «Թաւրիզի ընդհանուր աւետա-
րանը» եւ «Օրիորդաց Թամարեան դպրոցը»:
Գրական բաժին մէջ մենք տեսնում ենք Վեր-
դիի «Այդա» օպերայի թարգմանութիւնը (իւր-
եքատո), մի յօդուած (Հ. Ս. Սերմանի) այդ
համարում տպված պատկերների մասին:
«Թիւրքահայ դէմքեր», համառօտ կենսագրա-
կան տեղեկութիւններ այն անձանց մասին,
որոնց պատկերները տպված են այդտեղ: Վեր-
ջը գալիս է «Դաւիթ կամ Թաւրիզ» հեռա-
գրական յօդուածը (Հ. Ս. Էփրեկեանի): Զը
մտաւանք առնել, որ շապիկի երկու երեսներն
էլ նուիրված են գրական նիւթերին: Այս ար-
տաքին նկարագրութիւններից երեւում է, թէ
որքան հաճելի մի նորութիւն է այս չափա-
զանց էփեմագին, ամեն մէկին մատչելի պատ-
կերազարդ հրատարակութիւնը: Բայց մենք
ունենք հազարդուլ եւ մի աւելի ախորժելի
նորութիւն: Խմբագրութիւնը յայտնում է.
«Ասոր մաքուր հատիկին կէսը» առանց կրօնքի
խտրութեան պիտի յատկացուի ազգին ուրիշ-
ներուն: Ուստի սկսում է «Օղջիւղ» ու գործնք
խմբագրանիւթով: Ահա ինչ է ամսված այդտեղ:

Որ կայ խնդրութիւն, որ կայ թշուա-
սութիւն, լքումն եւ ողբալի ճակատագիր,
անհրաժեշտ է գործելը: Մեր ներկայ դրու-
թիւնը զմեզ գործելու կը ստիչ: Ազգին ամեն
առանձին դասակարգ իրեն վիճակին համե-
մաւ գործելու պարտք մ'ունի: Հարուստի
մը անտարբերութիւնը հանդէպ ազգին ամե-
նապարտանքի կ'արտայայտուի եղունորստի
թիւն մէջ: Կայրենիքի սովը, միակութիւնը,
հիւժո՞ղ եւ ապառը անօթութիւնը՝ գթու-
թեան, ողորմութեան աղէկաբշ կ'ակնարկ
կը բարձրացնեն: ու այդ՝ սիրտ արիւնող
ձայնը՝ անտարբեր հարուստին համար՝ մը-
անյող բողբոջ մ'է:

Բայց ինչու միայն հարուստի մասին խո-
սել: Արդե՞ք ճաւական չէ որքան հարուստե-
ցինք հարուստի քաղաքագրութիւնը, եւ ժամա-
նակ չէ չունենալների կօպէկներին դիմելը,
լաւ իմանալով, որ այդ չնչին դրամներից զե-
տեւ կարող են դոյանալ: Ահա խմբագրութիւնը
չարենակում է:

Ժամանակն է՝ որ մեր սովորաւոր եղբայր-
ներուն պատուաւ մը չոր հաց հասցնելու եւ
անոնց մերկ կոտակին վրա պատառոտուն
«չուր» մը ձգելու համար, գրկուինք մեր
քայքայված գրօտանքին եւ աւելորդ կերու-
թեւէն...

Հայրենիքի թշուառ դաւակ՝ զողջողուն
ծնունդին, յուսանաւ երիտասարդը եւ ծնո-
ղազուրկ որբիկը, միահամուռ օգնութիւն
կաղաղակեն...

Նոյն ձայնը մեզ յարգող մեղաւ ձեռք
զարնելու այս պատկերազարդ թերթին ալ,
որուն նպատակն է նախ փոքրիկ թիկունք
մըլլալ մեր կարօտելոց, եւ երկրորդաբար
ներշնչել ազգին գեղեցիկն ճաշակը:

Ուրեմն, տարով 1 ռ. 20 կոպէկ, «Գեղուն-
ի» իւրաքանչիւր բաժանորդը մի փոքրիկ
օգնութիւն հասցնած կը լինի եւ հայ որբիկ
ներին: Պէտք է ասել, որ այդպիսի բաժանորդ-
ներ շատ օւ շատ պիտի տայ հայ ազգը: Առանց
բարեգործական համակրելի նպատակն ունեցող
առաջին կենսաւոր էլ արժէ, որ այդ համար-
անաչելի գեղարուեստական հրատարակութիւնը
չաւ լայն կերպով տարածվի մեր ժողովրդի
մէջ: Մենք շատ անգամ ենք ասել, որ Միւ-

թարեանները բոլոր յարմարութիւններն ու-
նեն Եւրոպայի գեղարուեստի եւ մեր ժողո-
վրդի մէջ միջնորդ հանդիսանալու: «Գեղունին»
չորս ամենալաւ ապացոյցն է:

«ԱՐԾՈՒՅԵՒՆ» լրագրը, ծանօթանալով իր
ընթերցողներին հ. Արիւնի հոգեհանգստի մա-
սին ծագած տարածալսութիւնների հետ, որոնց
սկզբնապատճառը եղաւ Յովսէփեան վարդա-
պետը, բերում է այն փաստը, որ առասաց ե-
կեղեցին էլ ընդունում է հոգեհանգստ օտար
դաւանութիւններին պատկանողների համար.
այսպէս, երբ մեռաւ կոմս Գրիգորով (հայ-լու-
սաւորչակուն), նրա համար հոգեհանգստներ
կատարվեցին առասաց եկեղեցիներում եւ դրա-
րօցներում: Լրագիրը ցանկալի է համարում
լոկ այս առիթով եւ առասաց եկեղեցու հովիւ-
ների կարծիքը:

ՓՈՒՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գաղտնիք չէ, որ այժմ գոյութիւն ունեցող
միջնաւարդ դպրոցները չեն բաւականացնում
մեր կարիքները: Իւրաքանչիւր տարի ահա-
գին թւով աշակերտներ մնում են դպրոցից
զուրա, ապաւնով միւս տարվան՝ որ դուզէ մի
կերպով ընդունվին: Աւելորդ է ասել՝ թէ որ-
պիսի ցանքեր եւ դրամական ահագին ծախ-
քեր են գործ դրվում, մինչեւ որ մի կերպ ա-
յոջվում է երեխային ընդունել տալ՝ միջնա-
կարգ դպրոցներից մէկը:

Այս հոգեբեր կրկնապատիկ ծանր են գաւա-
ռացիների համար, նախ որ ծախսը կրկնապա-
տիկ է լինում, իսկ գաւառացին շատ դժուա-
րութեամբ է կարողանում ամենի այդ ծախ-
սերը: Գիտենք շատ ընտանիքներ, որոնք
յառաջապէս տեղափոխվել են Թիֆլիս երեխա-
ներին կրթութիւն տալու ծախսը թեթեւաց-
նելու համար, քանի որ պատկանողի վճարած
փողով կարող են թէ իրանք եւ թէ երեխա-
ները միասին ապրել:

Այս եւ ուրիշ բազմաթիւ պատճառներ ի
նկատի առնելով, բնական է, որ մենք էլ ու-
րիշներէ հետ ասենք, որ մեզ հարկաւոր է ու-
նենալ մի քանի միջնակարգ դպրոցներ է,
բայց մենք ուրեւմ ենք խոսքը մտնուածող
Ախալցխայի եւ Ախալքալաքի գաւառների վե-
րաբերմամբ:

Անդրկովկասի փոքր ի շատէ աչքի ընկնող
քաղաքները (Թիֆլիս, Բազուի մասին ասե-
լուք է յիշելը)—Երևան, Շուշի, Բաթում,
Փոթի, նոյն իսկ Թիւրքա եւ այլն ունեն մի կամ մի
քանի միջնակարգ դպրոցներ թէ արական եւ
թէ իգական՝ միայն մեր յիշած երկու գաւառ-
ներն են, որ չունեն սեփական միջնակարգ
դպրոցներ: Թէեւ այդ երկու գաւառներին էլ
Թիֆլիսի իւրաքանչիւր միջնակարգ դպրոցում
առանձնակերպ կարելի է հաշուել աշակերտներ:
Հետեւապէս այն տեղեւոր էլ մեծ կարիք կայ
սեփական միջնակարգ դպրոցներ ունենալու,
մասնաւորաւ որ Ախալցխայում հաշվուած է մօտ
20,000 բնակիչ, իսկ Ախալքալաքի գաւառը
Թիֆլիսի նահանգի բազմաթիւ գաւառներից
մէկն է:

Տարակոյս չը կայ, որ եթէ յիշված քաղաք-
ները ունենային միջոց, միայն այժմ այս հոգ-
ը քաշած կը լինէին: Ինչ պէտք է, օւրեմն,
անել:

Մենք մեզ թոյլ ենք տալիս այստեղ յիշեց-
նել մի գաւառ, որը երեւի յուսով կը գոր-
ծադրվի սակայն մի ուրիշ նպատակի համար.
դա պ. Մ. Մուրաֆեանի կոտակած գուժարն
է, որով պէտք է հանդուգաբար ցանկութեան
համեմատ չինք եկեղեցի: Ախալցխայի ունի
չորս հատ լուսաւորչականների եկեղեցի: Ի
հարկէ նորի միանգամայն կարիք չը կայ: Եւ
վերջապէս կոտակած օրից այնքան երկար ժա-
մանակ է անցել, որ առաջ են եկել ժողովրդի
համար աւելի կենսական պահանջներ եւ կա-
րիքներ, իսկ կոտակողը, ինչ ասել կուզէ, ցան-
կանում է ժողովրդի համար բարի գործ կա-

տարիքի եւ ահա ներկայումս առաջնորդները համար գիտութեան տաճար կառուցանելուց աւելի բարձր գործ քննարկող է լինել մեր կարծիքով շատ արդարաւոր կը լինէր, եթէ պ. պ. կրտսերականները այս մասին իմաստային քաջութիւնը քննարկողները գտնուէին եւ այդ ցունկով թեան տեսակէտից առաջնորդութիւնով մեզ առաջնորդում ենք յիշեալ գումարը գործադրել Արարիկայումս միջնակարգ դպրոց հիմնելու գործին։

Մեզ սիրելի է յուսալ, որ պ. պ. Մուսթֆեանները կողմնակալ իրանց ծննդավայրի վերաբերմամբ հանդիսանալ այնպիսի բարեբար, ինչպէս Թաղեիք Բազուկի, եւ կը աւակած գումարի վրա մի գումար էլ աւելացնելով՝ քիչ թէ շատ կապահովէին դպրոցի գոյութիւնը։

Բացի այդ՝ Արարիկայի Ամենափրկիչ եկեղեցին միշտ հասել է օգնութեան իր հօտին թէ թշուառութիւններ ժամանակ եւ թէ լուսաւորութեան բարենպաստակ հիմնարկութիւններ հիմնելու գործում։ Յիշեալ Արարիկայիցիներն արեւած օգնութիւնը Արարիկայի հիմնադրողներն յատկացրած գումարները եւ այլն։ Կարծում ենք, որ մեր առաջարկած միջնակարգ դպրոցներն էլ այնքան կենսական եւ անհրաժեշտ կարիքներից են՝ որ եկեղեցին էլ կը համար օգնութեան եւ իր ունեցած միջոցներից ծախականների ընդհանուր արոյմամբ մի գումար կը նուիրէ այս գործին։

Վերջապէս երեւի Արարիկայի եւ Արարիկայի հարեւանները նոյնպէս առանց խառնութեան կը հասնեն օգնութեան եւ իրանց լուսաները կը միացնեն ընդհանուր գործին։ Օրինակ, քննչ նշանակութիւն ունի իւրաքանչիւր այնպիսի ընտանիքի համար, որի օրդինները ամբողջում են օտար քաղաքներում, նուիրել 1,000-ական ռուբլի։ Կէ որ այդ ծախսը երկու տարեկան մէջ յետ կը օտարուի, եթէ դպրոց հիմնովի եւ իրանց օրդինը օգնութեան այնպէս զեւ թողնենք բարեկամային այն մեծ օգնութեանը, որ ամենում են օգնողը երեխաները, չը զրկվելով մանուկ հասակից ծնողների քնքոյն հոգատարութիւնից եւ օտարների ձեռքը չընկնելուց։

Ներկայ առաջարկութեան վրա դարձնում ենք Արարիկայի քաղաքային վարչութեան ուշադրութիւնը։

Անյուշ

ՎՐԱՑ ԲԱՏՐՈՆ

Կիրակի, դեկտեմբերի 2-ին, վրաց դրամատիքական խումբը առանց չորրորդ հանրամատչելի ներկայացումը։ Այդ երեկոյ խաղացին երկու պիէս՝ «Ներկայից Երեւանի քաղաքային Ներկայիցի» եւ «Արարիկի ծախ» կոմիքիան (Բ)։ Որքան ցանկալի է առաջին տեսակ պիէսները խաղալ ժողովրդի առջեւ, նոյնքան անաւանելի են երկրորդ տեսակները։ Յայտնի է, որ ամեն ազգի գրականութեան մէջ լաւի հետ միտքին կայ եւ օտար տեսակը։ Այս վերջին տեսակ գրականութիւնը (Բ) — պատգիւտը — աչքի առջեւ ունի ժողովրդի ստոր ինտալիտներն եւ անկողանի պատգիւտների հեղինակները ունեն եւ իրանց տեսակ երկրպագուներ... Պատգիւտի ճիւղին է պատկանում երկրորդ խաղացած պիէսը։ Դա պիէս չէ, այլ կատարելաւ խաղաղութիւն... Նրա մէջ զուրու են բերված մեր քաղաքականության մի քանի գործադրանքները լուսանկարչական ճշգրտութեամբ։ Նոյն անունները, մակնշխանները, անտեղի հանաքները, ցինիքով լիքը սրախօսութիւնները եւ, որ ամենազրկաւոր է եւ ամենաանտանդին, կենդանի մարդկանց գրիմը եւ հագուստը բնոր վրա...

Այս լեզուականութիւնը պատկանում է վրաց խմբի հանգուցեալ յուշարար Նիկողայոս Գալաթեանին (հայ կաթողիկ), որ իր այդ պիէսը գնում էր ամառը այգիներում իր հացը հայթայթելու համար, չոր խեղճ մարդ...

Գուցէ նրան, հենց այդ խեղճութեան պատճառով, ներքին լինէր մի յանցանքը։ Բայց երբ նայել կընենք այս կողմից հաստատութիւն, ինչպէս են է վրաց դրամատիքական ընկերութիւնը, այս ղեկավարը չենք կարող թաղանթ մեր զգուշացն ու զայրութիւն...

Մշակը ուրախութեամբ ոգիւնենք ընկերութեան ցանկութիւնը, այն է վերնադասից ներքեւ բերել ժողովրդին, գնեալ դարձնելով մատչելի ամենքին։ Սակայն եթէ ժողովուրդը վերնադասից պիտի իջնէ այդպիսի խաղաղական պիէսներ տեսնելու համար, աւելի լաւ էր ոչ ինչ չանել, աւելի լաւ էր ոչ թէ հանրամատչելի ներկայացումներ տարբեր, այլ ուղղակի փակել

Թատրոնը, ժողովուրդը պիտի կրթվի Թատրոնում, իսկ դուք քննչ էք ապիս նրան ձեր պատգիւտներով։ Այնուհետեւ քննչ զանազանութիւն մի բաղադրել եւ լուրջ Թատրոնի մէջ, որ մնաց Թատրոնի վեհ, կրթիչ քաղաքարը, որ մնաց վրաց կոմիտեի եւթ անդամների ինտելիգենտութիւնը եւ բեթիսօրի հսկողութիւնը։

Միջոցը արդարացնում է նպատակը եւ կօմիտեից հասաւ նպատակին։ Թատրոնը լիքն էր ժողովրդով եւ կատան փողով։ Բայց յանուն ժողովրդական կրթութեան գործին պէտք է զգուշացն այսպիսի միջոցներից։

Thaleia

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Նայեմբերի 30-ին

Նրկար ամիսներ ոպառնուց յիտոյ, վերջապէս, երէկ՝ ամսիս 20-ին, հայ դրամատիկ խումբը, համաձայն իր տուած յայտարարութեան, սեզոնը բացելու Զուգրեմանի «Հայրենական տուն» պիէսով։

Նախընթաց երեք ներկայացումները, որ առանց պ. Արաքսեան սիրողների եւ խմբից զուրու մնացած ազատ դերասանների ու բերասանութիւնների մասնակցութեամբ, յուսարել էին մեզ թէ՛ կ'ունենաւ խումբ եղած ժամանակ, անուշա հասարակութիւնը նոյնպիսի սիրով եւ պատրաստակամութեամբ կը լինէր Թատրոնը, ինչպէս այդ տեղի ունեցաւ յիշեալ երեք ներկայացումների ժամանակ։ Սակայն այլ էր իրողութիւնը։ Թատրոնը կիտով չափ դատարկ էր։ Դի հանգամանք, որ որոշ չափով կարող էր ազդել դերասանների խաղի վրա եւ եթէ չենք սխալվում ազդեցիկ ներկայացումը ընդհանրապէս շատ օտան անցաւ։ Նոյն իսկ օտարական բարձր դատար, ուղիւնի ծափահարութիւններն անգամ մեծ խնայողութեամբ արվցին դերասաններից միայն ա. Սիրանյանի՝ դրամայի գլխավոր հերոսուհու Մարգարիտի դերում, որ պէտք է ասել, այս անգամ շատ էլ աջող չէր։ Այնուհետեւ մէջընթաց ծափահարում էին եւ միւս դերասաններին բնա հրաւիրելով։

Բացեալից գրելու դիտարկութիւն չունենք։ Այդ կանեն, անուշա, «Մշակի» մշական բեցնդիւնները։ Միջակակալ կերպով կասեմք միայն, իբր անձնական ապաւորութիւն, որ խումբը մնացել է նոյնը եւ գրեթէ անփոփոխ։ Պակասել է ա. Մայսուբեան, որ շատ կարեւոր ոյթ էր խմբի համար, եւ աւելացել են երկու նոր օյծեր—որ. Գալաթեան եւ պ. Ռշուանի, որոնք ունեն բնական գեղեցիկ ձայն եւ մաքուր, պարզ արտասանութիւն։ Պակասում է նրանց միայն չարժանաւորների, ձեւերի ներդաշնակութիւն, գեղեցկութիւն, որոնք, մասնաւորապէս, Գալաթեանի խաղի մէջ, բացաւայում էին։ Դեռեքըր նրա համար կատարելապատուհան էին, չը գիտէր օր եւ ինչպէս թաղանթը էին, ծանծաղանք լաւ էր պ. Ռշուանի, որ ունի ձիւք եւ կարող է մօտիկ ապագայում պատուաւոր տեղ բռնել բնոր վրա, եթէ ուշադիր կը լինի, ի հարկէ, իր այդ մանր թերութիւնները հետաքննելու, որոնք անուղղելի չեն։ Օւրախալի երեւոյթն այն է, որ պարոնը համեստութեամբ փոքրից է սկսել իր գործունէութիւնը։ Դեռեքըր թատրոնը ամենից առաջ, քայլ առ քայլ բարձրանալ, — ահա այդ դրութեան գլխավոր պայմաններից մէկը։ Նա դուրս էր եկել Հիւրմանի դերում (Շվարցի ծառան) եւ շատ նպատակաւոր ապաւորութիւն գործեց հասարակութեան բանիմաց մասի վրա։ Յուսանք, որ պարոնի փորձված պաշտօնակիցները լրջօրէն կը վերաբերվեն խնդրին, ի չարք չեն գործադրի նրա առաւելութիւնները եւ կը ջանան քաղաքացի, մշակել նրա մէջ այդ բարեմասնութիւնները յօգուտ հայկական աղքատիկ բնակի։

Լաւ ապաւորութիւն թողեց եւ ա. Աւետեան Մարիի դերում։ Երգելի տիպիւր աչքի ընկնելու չափ առաջադիմել է։ Նախընթաց մի քանի տեղանքներում էլ տեսել ենք ախիւնդ զանազան դերերում—տարբերութիւնը մեծ է եւ յօգուտ տրիկնոյ։

Պ. պ. Պետրոսեան, Արեւիկան իրանց բաւական պատասխանատու դերերում արին ինչ որ կարող էին, սակայն կենդանութիւն ներշնչել ամբողջութեան անկարող եղան։ Միւս դերակատարները անբաւարար էին եւ ոչ իրանց դերերում։

Ներկայացումը վերջացաւ ժամը 11 1/2-ին, զուտ արդիւնք մնաց 200-ից աւելի։ Միւս ներկայացումը տեղի կունենայ դեկտեմբերի 3-ին։ Խաղում են Վաֆոն։

Սլաք

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջևան, Նայեմբերի 20-ին

Նոր-Նախիջևան խնդրում են Ռաֆայել Պատկանանի բոլոր բարեկամներից եւ ծանօթներից, որ ուղարկեն ինձ մեծ բանաստեղծի իրանց մօտ եղած թէ օտանաւորները, թէ արձակ գրուածքները, թէ անկարելի է բնագիրները ուղարկել, գէթ ուղարկեն պատճենները, թէ եւ իսկականները իսկոյն կը վերադարձնեն եւ լաւ կը լինէր տեսնել իսկականները։

Նոր-Նախիջևանի Բարեգործական ընկերութիւնը պիտի հրատարակէ բանաստեղծի անուշա երկերը։ Դժբաղդաբար, մինչեւ այժմ ոչ ոք չէ կարողել իր պարտքը եւ չէ ուղարկել մեզ անուշա օտանաւորները, մինչդեռ մենք հաւատարմած ենք, որ անուշա օտանաւորները շատ կան եւ հետեւաբար պիտի կորչին, եթէ չը ապրեն այժմ։ Ահա ինչ է գրուած ինքը, բանաստեղծը, իր թղթերի մէջ։

«Միայն այս ասորի, այսինքն՝ 1885-ի սեպտեմբերի 18-ին, սկսեցի թղթերիս մէջ գրել ընկած օտանաւորները ժողովրդու իսկ մինչեւ այժմ եւ ամենեւին հոգա տարած չէի այդ մասին եւ այդ պատճառաւ հարկ էր աւելորդ օտանաւորներ անդարձ կորած փոխարին համարել բարեկամաց եւ ծանօթներու մօտ»։

Դարձեալ խնդրում ենք ալը բոլոր բարեկամներին եւ ծանօթներին, որ յարգելով բանաստեղծի յիշատակը, ուղարկեն նա երկերը մեզ։ Нахичевань на Дону (կամ Ростовъ на Дону) Григорію Чалхушяну.

Գր. Չալխուշեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, Նոյեմբերի 18-ին

Կարդացի պ. Պրանդեանի հոկտեմբերի 14-ին թարգմտելու համար, որի մէջ կրկին չիշաղծ էր Ռուսիոյում իբր գոյութիւն ունեցող աղանքի մասին։ Շտապում եմ յայտնել, որ մինչեւ այսօր եւ այստեղ չեն հանդիպել ոչ մի «աղանք», երկրորդ, որ պատգամաւորներից ոչ ոք չէ մէ եղել ընտրութեան, ինչպէս այդ երեւում է իրանց կողմից ինձ ներկայացրած գրաւոր փառաբանից։

Երրորդ րը եւ բոլորի կողմից հանդիպեցի ազգային-հասարակական գործերը ժամանակակից պահանջների համապատասխան կացութեան հասցնելու բուն ծարաւի։ Զորքայ, որ ամենախառնութեամբ է, ամենամիտքութեամբ եւ ոգեւորելի եւ որի մասին կարող եմ աւետել հայ հասարակութեան, այդ այն է, որ այժմ թաւրիզի ամբողջ հայ հասարակութիւնը մի էր, մի հոգի դարձած իր առաջնորդի հետ, շտապում է օր առաջ սկսել հասարակական գործունէութիւնը եւ կատարել ղէպի ժողովուրդն ունեցած պարտքը։

Իմ վերաբերութեամբ իւրաքանչիւր թղթակից ազատ է, ի հարկէ իր կրթիչների եւ դատողութիւնների մէջ, իսկ ինչ կը վերաբերի մարդկանց մօտեցր յուզող անհարկներին եւ թղթակցութիւններին, խնդրում եմ յարգելի թղթակցներից՝ որչափ կարելի է զգուշ լինել խաղաղ եւ աջող գործունէութեան արգելք չը դառնալու համար։

Ուրախ եւ գոհ ներկայումս տիրող սիրով եւ համերաշխութեամբ, օրհնում եմ բոլորներն եւ ազօթներ, որ ներկայ միաբանութիւնը ունեն լարատեւ եւ անխախտ լինեն յօգուտ թեմիս հասարակական բազմամասնական գործերի եւ ի միջիջարկութիւն բազմակարգ հայ ազգաբնակչութեան։

Առաջնորդ Արարիկայի

Ե. Ժ. Վ. Մուրադեան

ՆԵՐԳԻՆ ԼՈՒԻՐԻՐ

Հայ քահանաներից մէկը, Նրեմիս Ստեփանեան, ուղարկել է մեզ հրատարակելու հետեւեալ արդարացի նկատողութիւնը։ «Մենք, հայեր, շատ բաների մէջ տարօրինակ ենք, ինչպէս եւ հոգեհանգիստների հարցի մէջ։ Հայ հոգեւորականին հայոց եկեղեցական օրէնքները չեն արգելում, թէ ուրիշ դաւանութեան պատկանող նորաձիւններին մի մկրտէք, մի թաղէք եւ մի պատկէք. մինչեւ անգամ այլադաւանները (բացի ուղղափառներից) իրաւունք ունեն պատկաւորութեան խաչ-ճաշար կամ խաչ-հայր լինելու։ Եթէ օրէնքով իրաւունք ունենք հայ-կաթողիկէին, բողոքականին եւ այլն մկրտելու, պատկելու, թաղելու, ինչեւ իրաւունք չունենք հոգեհանգիստ կատարելու։ Միջին թաղանթի ժամանակ նոյն մաղթանքները չենք կարողում. այս հիման վրա մենք իրաւունք ունենք միշտ հոգեհանգիստներ կատարելու եւ հոգեւոր իշխանութեանը դիմելու հարկ չը կայ։ Այդ եւ ուրիշ հանգամանքներ աչքի առաջ ունենալով, եւ առանց իրաւունքի կատարելի, ամսիս 25-ին, հանգուցել հ. Ղեւոնդ Ալիշանի համար հոգեհանգիստ»։

Սլաք

քահանայի գլխավոր քահանայ յանձնաժողովը վերջապէս իր պարագային վերջնականապէս ձեւակերպեց վկայականները, կարգադրեց պարգեւները եւ պատուիրեց կաղմել վերջնական ցուցակներ։ Պարգեւների ցուցակը կը յայտարարվի առաջիկայ կիրակի օր, դեկտեմբերի 20-ին։ Դեռ չէ օրոյված, թէ որտեղ կը կատարվի պարգեւների յայտարարութեան հանգիստը։

Մի քանի համալսարաններ ժողովրդական լուսաւորութեան միջնարակութեան հարցին, թէ կարելի է արդեօք Թոյլ առլ անաւանարոյծներին մտնել բժշկական ֆակուլտետները, պատասխանեցին դրական մաքով, աւելացնելով իրանց պատասխանին, որ այդ ղէպը մանաւանդ չենք պէտք է զննութիւն բռնեն լաւինքէն լեզուից գիմնադրանքի ծրագրով։

Թիֆլիսի քաղաքային կրթիչային ընկերութեան դիրեկտոր Վ. Ի. Կարաւանով մասկան պատճառով, այդ ընկերութեան դիրեկտորի պաշտօնը վարելու համար հրաւիրված է Ալ. Ս. Կորգանով։

Կովկասեան լեռնային վարչութիւնը, ի նկատ առնելով տարածված հակասական լուրերը Դիլանի հովտում գտնված ուկրաինների մասին, որոնց մի երկարաւն ուղարկել այնտեղ մանրամասն հետախուզութիւն կատարելու համար։

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ միտք է ծագել հիմնելու քաղաքի կենտրոնական տեղերից հեկտո օրինակելի շուկայ, որի համար արդէն ի նկատ են առնված մի քանի տեղեր, ի միջի այլոց եւ Մաքաթեան կղզին։

Մայրաքաղաքի լրագիրների առելով, կարծ ժամանակից յետոյ Պետերբուրգ է գալու Ֆրանսիական առեւտրի միջնարար Միլերան։

«Православный Востокъ» ամսագրում բերված է հետեւեալ հաղորդագրութիւնը ուսւ ժողովրդի կրօնական զգացմունքները շահագործողների մասին։ «Պարսկաստանի սահմաններում աղբուր է նեւաւորական եպիսկոպոսը, որ անուանվում է Սուպերգանեան մարապոլիտ Մար-Սոնա, որը 1893 թ.ին, Մոսկվայի միտրոպոլիտ Վլադիմիր Խնդիրեով, մարտի 25-ին, Պետերբուրգի հանգուցեալ միտրոպոլիտ Պալլադի կողմից ընդունվեց ուղղափառ եկեղեցում 3 ասորիներով, ինչպէս ընդունում են այն աղանդաւորներին, որոնք դաւանում են ուղղափառների հետ միասին մի եւ նոյն վարդապետութիւնները եւ հաւատում Այդ ժամանակից այդ եպիսկոպոսը հարկաւոր չը համարեց ներթափվել ոչ Անտիօքի պատրիարքին, որի օսանանքներում նա ապրում է, ոչ տեղեկութիւն է ապիտ ուղղափառ եկեղեցիներին այն բանի մասին, թէ արդեօք նա գտնվում է նրանց հետ յարակցութեան մէջ եւ արդեօք միտք ունի նա վերածնել ուղղափառութիւնը Պարսկաստանում։ Անդրկովկասից առացված տեղեկութիւնների համեմատ, Մար-Սոնան իւրաքանչիւր տարի Ռուսաստան է ուղարկում մինչեւ հազար նշտարականների, որոնք ջահանայական զգեստով, եկեղեցու «ուղղափառ» պաշտօնականի անցագրիներով, ունենալով իբր թէ Սրբաւորէմի պատրիարք Դամիանի կեղծ վկայականները, ոչ միայն պատուում են Ռուսաստանի քաղաքները եւ գիւղերը, այլ եւ քահանայազորում են ծխականների տներում, ամեն տարի ժողովրդի հարկը հազար ռուբլիներ Գրիգորով Գրեգորով համար եւ անբարոյական ու գալթակալի կեանք վարելով Ռուսաց հոգեւոր իշխանութիւնը վաղուց ուշադրութիւն է դաշնել այդ բանի վրա, բայց, այնուամենայնիւ, պարսկական այդ թափառաշրջիկների թիւը մեծանում է ինչպէս եւ գտնաւորները պարզամիտ եւ դիւրահաւան առեւտրի խաբուլու ղէմ Գաւմում են մարդիկ, որոնք իրանց հովանաւորութեան տակ են վերցնում այդ խաբեւաններին, գտնելով, որ նրանք խախտում են հաւատը ղէպի յոյները (նեւտարականներ իրանց յոյն ներկայացնում) եւ շնու են հասցնում Սրբաւորէմի պատրիարքութեանը։ Նեւտարական թափառաշրջիկները լիութեմ են Սերբիայում եւ այնտեղ էլ ժողովում են նուիրաւորութիւններ Գրեգորովի համար»։

Աղբիւրը եղբայրների ներկայացումները շտաւանակում են գրաւել Թիֆլիսի հասարակութիւնը ղէպի Արտիստական ընկերութեան թատրոնական դաւիթը, իւրաքանչիւր նոր պիէսի համար։

Աղբիւրը եղբայրների ներկայացումները շտաւանակում են գրաւել Թիֆլիսի հասարակութիւնը ղէպի Արտիստական ընկերութեան թատրոնական դաւիթը, իւրաքանչիւր նոր պիէսի համար։

պիտեւում նրանք ցոյց են տալիս ինքնուրոյն
եւ ընտրող գծեր, որոնք տարբերվում են նախ-
կին ներկայացուցիչների մէջ արտայայտված գը-
ծերից, նրանք խաղում են թէ կուսակցական
եւ թէ ժամանակակից ընկերակցութեան վերջ-
րած պիտեւորութեամբ։ Բոլորեալ Աղեղնէյի ներկա-
յացրած Օսելլոն եւ Բաֆայի Աղեղնէյի Սա-
գուն շատ ընտրող էին եւ համապատասխան
չէկողորդեան գրականութեան ներկայ ըննա-
դասութեան պահանջներին։

ՄՕՍԿՎԱՍԻՑ միջ գրում են. «Նայմաբի»
25-ին, Անտոնովսկիի ժողովարանի դահլի-
ճում, կայացաւ սովորական լուսարարական երե-
կոյթը։ Այս երեկոյթը 27-րորդն էր ժողովարանի
մի քանի սենյակներում շինված էին վրանա-
նման կիտիկներ զարդարված պարականգն գոր-
գերով եւ մետաղեղէններով որտեղ ծախում
էին զանազան մրգեր։ Երեկոյթի համերգական
բաժինը բազմակողմանի էր։ Երեկոյթին մաս-
նակցում էին մի քանի յայտնի երգիչներ եւ
երգչուհիներ, որոնք երգեցին աշուղութեամբ
պատճառելով հասարակութեան մեծ բաւակա-
նութիւն։ Առանձնապէս զբաւեց երեկոյթի
առանձին կայանքական թատրոնի դերասան եւ
դրամատուրգ իշխան Սոււսլով (Իւսիւ) իր ըն-
թերցանութեամբ եւ մեծ թատրոնի երգիչ բա-
րիտան Բերնարդի իր երգեցողութեամբ։ Սրանք
վարձատրվեցին հասարակութեան կողմից ազ-
մակալի ծախանարարութիւններով։ Կին լուսարար-
հար Պրոկոպովի գեղեցիկ կերպով անց ջու-
թակի վրա մի քանի համարներ։ Խուսքը, դե-
կավարութեամբ պ. Պալկիւնի, լուս երգեց մի
քանի վրացական-ժողովրդական երգեր։ Լուս էր
մանաւանդ «Բաւարիա դրոշմ» երգը։ Բոլոր
դերասանները ստացան ծաղկեղէն պատկեր
թուրմ ծաղկեղէններ, իսկ դերասանները դափ-
նեայ պատկերներ։ Լուս էր եւ սափական պար-
իցողներ, որ հիւանդի կերպով պարեցին ազ-
գային տարազով հաղթած երկու վրացուհի-
ներ։ Վրացուհիներից մէկը իր գեղեցիկ դէմ-
քով եւ սեւ խոշոր աչքերով աչք էր ընկնում
ներկայ եղողներին։ Եւրոպական պարեր տե-
ւեցին մինչեւ ժամի 3-ը, մուտքը պէտք է
կարծել որ լուս էր. ահապէս դալիւն ի էր բազ-
մութեամբ։ Հասարակութիւնը ցրվեց գոհ սրը-
տով։

ԱՐԴԱՆՈՒԳԻՑ միջ գրում են. «Երեկոյթ»,
նոյեմբերի 18-ին, հայ-կաթոլիկներէ եկեղեցա-
կան ծխական ուսումնարանի դահլիճում նոյն
ուսումնարանի օգտին տեղի տրուող երեկոյթի ներ-
կայարարին «Ղոնաղուղու միաց», «Երեկոյթ-կոթ»
եւ «Սիրահար» սեղանի տակ վոզըլիները,
Խաղը չնորհիւ սիրողների միջոցով աշխատու-
թեան անցաւ բաւական լուս. մանաւանդ աչքի
էին ընկնում իրանց խաղով օր. Սրապիտինսկի
եւ օր. Զաքարեանց, որոնք առաջին անգամ
բեմ գլուխ դառնալով հանդերձ պատկան էին իրանց
ազատ. ներկայացումը գրաւել էր մեծ հասա-
րակութիւն, որը գոհ օրոտով հեռացաւ թատ-
րոնից։ Սիրողները մտադիր են ապ մի շարք
էջանալի ներկայացումներ։

ԱՐԱՍՈՒՄԱՆԻՑ միջ գրում են. «Նոյեմ-
բերի 23-ին տեղի ունեցող Գեորգ հայոց եկե-
ղեցում հ. Դեռնի Աղիանի յիշատակին հոգե-
հանգիստ կատարվեց, որի ժամանակ ներկայ
էր թէ լուսարարական եւ թէ հայ-կաթոլիկ
հասարակութիւնը։ Երկու կողմի հասարակու-
